

Կառուվաարան և Իլտալեհտին ընդդեմ Ֆինլանդիայի (Karhuvaara and Italehti v. Finland), 2004, Application no. 53678/00 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեմա՝ սահմանափակում

Ենթաթեմա՝ անձնական կյանքի իրավունքը հարգելը

Սանկցիա՝ մեղադրական դատավճիռ, հատուցում վճարելու պարտավորություն

Թեսթ՝ անհրաժեշտ

Իրավասություն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ֆինլանդիա

Փաստական հանգամանքներ

Առաջին դիմումատուն ֆիզիկական անձ է և ապրում է Հելսինկիում: Երկրորդ դիմումատուն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է և գրանցված է Հելսինկիում: Դիմումատու ընկերությունը հոդված հրապարակեց կրթության և մշակույթի հարցերով խորհրդարանական հանձնաժողովի նախագահի ամուսնու դեմ հարուցված քրեական գործի վարույթի մասին: Հոդվածը վերնագրվել է. “Խորհրդարանականի ամուսինը ռեստորանում հարվածում է ոստիկանին”: Դրանից հետո տվյալ թեման լայնորեն լուսաբանել են նաև այլ լրատվամիջոցներ:

Տիկին Ա-ն՝ չվիճարկելով հոդվածում ներկայացված փաստերը դիմումատուների և հոդվածի հրապարակման գործում ներգրավված երկու լրագրողների դեմ զրպարտության մեղադրանքով հայց հարուցեց դատարան: Նա պահանջում էր պատժել պատասխանողներին՝ իր անձնական կյանքի իրավունքը խախտելու և զրպարտության համար:

Հելսինկիի շրջանային դատարանը առաջին դիմումատուի և երկու լրագրողների դեմ անձնական կյանքի իրավունքը խախտելու մեղադրական վճիռ կայացրեց և պարտավորեցրեց հատուցում վճարել տիկին Ա-ին: Զրպարտության մեղադրանքները չհաստատվեցին:

Ֆինլանդիայի վերաքննիչ դատարանն ուժի մեջ թողեց առաջին ատյանի վճիռը, իսկ գերագույն դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ չընդունեց:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում

Դիմումատուները պնդում էին, որ իրենց նկատմամբ ձեռնարկված միջոցառումները “անհրաժեշտ չէին ժողովրդավարական հասարակությունում”:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

Ընդհանուր սկզբունքներ

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնասյուներից է եւ նրա առաջընթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլեւ այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»:

«Անհրաժեշտ» ածականը ենթադրում է «հանրային շահի» առկայություն: Անդամ պետություններն օժտված են որոշակի հայեցողությամբ գնահատելու նման անհրաժեշտության առկայությունը, սակայն ՄԻԵԴ-ն իրավասու է գնահատել ինչպես օրենքը, այնպես էլ այն կիրառելու որոշումը, այդ թվում նաև անկախ դատարանների ընդունած որոշումները: Այդ պատճառով, ՄԻԵԴ-ն իրավասու է վերջնական որոշում կայացնել, թե «սահմանափակումը» համատեղելի է արդյոք արտահայտվելու ազատության հետ:

ՄԻԵԴ-ը պետք է միջամտությունը դիտարկի գործի բոլոր հանգամանքերը համադրելով և որոշի, թե արդյոք այն «համաչափ է եղել օրինական նպատակին» և արդյոք միջամտությունը հիմնավորելու նպատակով ազգային մարմինների ներկայացրած պատճառները «վերաբերելի են և բավարար» (59-րդ պարբերություն):

ՄԻԵԴ-ը վերահաստատում է նաև, որ ցանկացած սահմանափակում, ինչպես օրինակ նյութի հրապարակումը դադարեցնելն է, պետք է ենթարկվի խստագույն ուսումնասիրության:

Լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի չափազանցության և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն: Պետության “հայեցողության լուսանցքը” սահմանափակված է ժողովրդավարության շահով՝ մամուլի “հանրային հսկող շան” դերը կատարելու և հանրային լուրջ մտահոգության առարկա հանդիսացող հարցերի շուրջ տեղեկատվություն տարածելու հնարավորությունը ապահովելու նպատակով:

Անձնական կյանքի իրավունքի պաշտպանությունը պետք է համադրել կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված խոսքի ազատության իրավունքի հետ: Ինչ վերաբերում է 8-րդ հոդվածին, ապա ՄԻԵԴ-ը վերահաստատում է, որ դրա նպատակն է պաշտպանել անձին պետական մարմինների կողմից անհարկի միջամտությունից: Պետությունը սուկ պարտավորված չէ զերծ մնալ նման միջամտությունից: Ի հավելումն չմիջամտելու պարտականության, առկա է նաև անձնական և ընտանեկան կյանքը հարգելու պոզիտիվ պարտավորություն: Անհրաժեշտ է անկողմնակալ կերպով հավասարակշռել մի կողմից անձի իրավունքները, իսկ մյուս կողմից էլ՝ հասարակության իրավունքը: Երկու դեպքում էլ պետությունն ունի հայեցողական լուսանցք:

ՄԻԵԴ-ն ընդունում է, որ դիմումատուների մեղադրական վճիռները և հատուցում վճարելու կարգադրությունը հանդիսացել է միջամտություն իրենց խոսքի ազատության իրավունքի նկատմամբ: Միջամտությունը “նախատեսված է եղել օրենքով” և ունեցել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ այլոց հեղինակությունը և իրավունքները պաշտպանելու նպատակ:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ դիմումատուների կողմից փաստերը չեն խեղաթյուրվել: Այսպիսով, դիմումատուները չեն անցել լրագրողական ազատության սահմանը: Ի տարբերություն Թամերն ընդդեմ Էստոնիայի գործի, տիկին Ա-ի կյանքի մանրամասների մասին որևէ տեղեկատվություն չի ներկայացվել, բացի այն փաստից, որ վերջինս ամուսնացած է եղել հողվածում ներկայացված անձի հետ: Նման հանգամանքներում և, մասնավորապես, որպես քաղաքական գործիչ տիկին Ա-ն պետք է դրսևորեր ավելի բարձր հանդուրժողականություն, քան “միջին քաղաքացին”: Այդ պատճառով տիկին Ա-ն ուներ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված անձնական կյանքի պաշտպանության սահմանափակ իրավունք:

Հասարակությունն իրավունք ունի տեղեկատվություն ստանալ հասարակական գործիչների անձնական կյանքի մանրամասների մասին, որը ժողովրդավարական հասարակության կարևորագույն իրավունքն է:

ՄԻԵԴ-ը գտնում է նաև, որ պարոն Ա-ի դատական գործն այլ լրատվամիջոցների կողմից էլ լայնորեն լուսաբանվել և քննարկվել է երկրում:

Եվ վերջապես, ՄԻԵԴ-ն անդրադառում է կիրառված հատուցման գումարների ծանրությանը և գտնում, որ կիրառված տուգանքը բավական խիստ է եղել, եթե գործը դիտարկվում է այն հարթության վրա, թե ինչքան աննշան միջամտություն է եղել տիկին Ա-ի անձնական կյանքի իրավունքի նկատմամբ: Դա վկայում է ցնցող անհամաչափության մասին անձնական կյանքի և խոսքի ազատության միջև:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ ներպետական դատարանների հիմնավորումները թեև վերաբերելի, սակայն բավարար չէին ցույց տալու, որ միջամտությունն “անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում”:

Տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: